# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱԶԳԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՐԴՅԱՆ Գ. Ա.

XX դարի սկիզբը հայ ժողովրդի պատմական ճակատագրի բախտորոշ, նաև ողբերգական ժամանակահատվածներից էր: Նոր դարաշրջանը սկզբնավորվեց ռուսական առաջին հեղափոխությամբ, Անդրկովկասում՝ 1905–1906 թթ. հայ-ադրբեջանական ազգամիջյան ընդհարումներով, հասարակական-քաղաքական աննախադեպ զարգացումներով Առաջին համաշխարհային պատերազմով, որի ընթացքում տեղի ունեցավ Մեծ եղեռնը, 1917 թ. ռուսական հեղափոխություններով, Արևմտյան Հայաստանից ռուսական բանակի դուրսբերմամբ, 1918 թ. սկզբից թուրքական հարձակումներով, ազգամիջյան թշնամանքով, Հայոց անկախ պետականության հաստատումով, հայ-վրացական և հայ-թուրքական շարունակական պատերազմներով... Հայ առաջադեմ գործիչների թվում այս բոլոր իրադարձությունների հորձանուտում էր նաև Հովհաննես Թումանյանը: Հիշենք նրա հերոսական ու անձնազոհ գործունեությունը դարասկզբի հայ-ադրբեջանական ընդհարումները դադարեցնելու, ինքնապաշտպանական գործը կազմակերպելու, այնուհետև նրա հայտնի բանտարկությունը, Հայ գրողների Կովկասյան ընկերության ստեղծումը, Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատի բացման առաջին իսկ օրերին և հետո ռազմաճակատ մեկնելը, հայ գաղթականության նկատմամբ ցուցաբերած անօրինակ հոգատար վերաբերմունքը, 1917 թ. հայկական համալսարան և ակադեմիա ստեղծելու ուղղությամբ նրա ծավալած աշխատանքները և այլն:

Հատկապես ուշագրավ է Հովհ. Թումանյանի ծավալած բազմաբովանդակ գործունեությունը 1918-1920 թթ.: Խոսքը վերաբերում է բանաստեղծի գլխավորած Հայ հայրենակցական միությունների միության, վերջինիս ու նրա նախագահի անդուլ ջանքերով 1918-ի վերջերին Թիֆլիսում հիմնադրված «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքներին: Նկատենք, որ դեռևս 1918 թ. դեկտեմբերի սկզբից հայ բանաստեղծն անձնական մեծ ողբերգություն էր ապրում. հայտնի էր դարձել նրա որդու՝ Արտավազդի սպանությունը Վանի վերջին՝ մարտյան գաղթի ժամանակ: Ծանր ու խոր ապրումներն անգամ չընկճեցին մեծ հոգու տեր մարդու, քաղաքացու, բանաստեղծի աննկուն կամքը, և նա տքնաջան աշխատանքով շարունակեց իր ազգանվեր գործունեությունը:

1918 թ. սկզբին թուրքերը հարձակման անցան՝ իրար հետևից գրավելով Երզնկան, Էրզրումը, Կարսը, Սարիղամիշը, Վանը, լուրջ սպառնալիք ստեղծելով արևելահայության համար: Երկրում սկիզբ առավ ազգամիջյան թշնամությունը հայերի և թուրքերի (ադրբեջանցիների) միջև, Անդրկովկասի բոլոր գավառներում սկսվեցին կոտորածը, կողոպուտն ու ալան-թալանը: Հենց այդ օրերին էլ Թիֆլիսում ստեղծվում են հայրենակցական

միություններ, որոնց հիմնական նպատակն էր գավառներում կազմակերպել ինքնապաշտպանության գործը, նաև նպաստել երկու ժողովուրդների միջև հաշտության ու խաղաղության հաստատմանը: Հովհ. Թումանյանը, ինչպես միշտ, դրա ոգեշնչողն ու անմիջական կազմակերպիչն էր: Նրա նախաձեռնությամբ մարտի 1-ին տեղի է ունենում հայրենակցական միությունների միացյալ ժողով, որին մասնակցում են Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Նախիջևանի, Ղարաբաղի և Զանգեզուրի, Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ներկայացուցիչները: Թումանյանի առաջարկով հայրենակցական բոլոր միությունների միավորումով ստեղծվում է Հայոց հայրենակցական միությունների միությունը (ՀՀՄՄ), ապա կենտրոնական խորհուրդ, որն ընդգրկում էր յուրաքանչյուր հայրենակցական միությունից երկու ներկայացուցիչ: Մարտի 6-ի կենտրոնական խորհրդի նիստում քննարկվում են կազմակերպչական հարցեր. որոշվում է ընտրել ՀՀՄՄ-ի նախագահ, երկու փոխնախագահ, մեկ քարտուղար և գանձապահ: Միության նախագահ է ընտրվում Հովհաննես Թումանյանը, փոխնախագահներ՝ Արիստակես Զարգարյանը և Ստեփանոս Մալխասյանցը, քարտուղար՝ Համազասպ Համբարձումյանը: Նիստում որոշվում է նաև նյութական միջոցների հայթայթման հարցը՝ յուրաքանչյուր հայրենակցական միությունից ստացվող 5%-ի վճարումներով, որը կազմում է միանվագ 200 ռ.: Հաջորդ նիստի ժամանակ որոշվում է կենտրոնական խորհրդի նստավայրի համար բնակարան վարձել, իսկ գործի հաջող ընթացքի համար՝ պարտավորեցնել փոխնախագահներից որևէ մեկին ամեն օր որոշակի ժամերի լինելու գրասենյակում: Հետագա նիստերում քննվում են հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, հայ-թուրքական հաշտության առաջիկա կարևոր քայլերը, ՀՀՄՄ ունեցած ռազմամթերքը գավառ տեղափոխելու դժվարությունների հարցը: Որոշվում է գավառ ուղարկել խաղաղարար պատգամավորներ՝ այն պայմանով, որ նրանք տեղերում կազմակերպեն հաշտության մշտական մարմիններ՝ ժողովրդի հեղինակավոր ներկայացուցիչներից, հանդես գան մամուլում, հաշտության գաղափարը ժողովրդականացնեն և այլն: Նիստերը հաջորդում են իրար, օրակարգային են դառնում գաղթականների, նրանց տեղափոխելու, տեղավորելու, միության մեջ գործադիր մարմին ընտրելու մասին հարցերը: Հուլիսի 22-ին գաղտնի քվեարկությամբ ընտրվում է գործադիր մարմին, նաև՝ նոր նախագահություն: Նախագահ է ընտրվում Հովհ. Թումանյանը: Վերջինիս առաջարկով կոչ է պատրաստվում՝ ուղղված համայն աշխարհի ժողովուրդներին ու պետություններին, որը հրապարակվում է «Կավկազսկոյե սլովո» թերթի օգոստոսի 22-ի համարում: Այն ստորագրել էին Հովհ. Թումանյանը և Հ. Համբարձումյանը: Նկարագրելով հայ ժողովրդի ծանր, ողբերգական վիճակը՝ կոչում խնդրվում էր բարոյական ու նյութական օգնություն ցույց տալ նրան: Բայց սպասելիքները, ինչպես միշտ, չեն արդարանում...[1]: Դա, սակայն, չի վհատեցնում Հովհ. Թումանյանին ու նրա համախոհներին: Կատարվող մեծածավալ աշխատանքները հանգեցնում են նրան, որ հարց է ծագում հաշվառել հայ ազգաբնակչությանը հասցված վնասները: Եվ ահա, հոկտեմբերի սկզբից

[1] *Տե՛ս* **Կարապետյան Լ.,** *Թումանյանը և հայոց հայրենակցական միությունների միությունը (Պատմաբանասիրական հանդես, այսուհետև՝* ՊԲՀ*), 2002, N 2, էջ 31-38:*

ընթացող նախապատրաստական աշխատանքների շնորհիվ 1918 թ. նոյեմբերի 21-ին ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի ընդհանուր ժողովում հիմնվում է Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը՝ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ: Արդեն իսկ նոյեմբերի 24-ի հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովում, ապա և դեկտեմբերի 4-ի միությունների միության կենտրոնական խորհրդի նիստում նա հանդես է գալիս Քննիչ հանձնաժողովի ստեղծմանը, նրա խնդիրներին ու գործունեությանը նվիրված զեկուցումներով: Ըստ այդմ՝ Քննիչ հանձնաժողովի անհետաձգելի խնդիրն ու նպատակն են համարվում Առաջին աշխարհամարտին հայերի մասնակցության, Հայոց եղեռնի, հայ բնակչության գույքի և ունեցվածքի կողոպուտի ամփոփ հուշագիր կազմելն ու Փարիզի Խաղաղության վեհաժողովին ներկայացնելը: Ստեղծվում է չորս ենթահանձնաժողով կամ բաժին. պատմաքաղաքական, ռազմապատմական, տնտեսական և քրեական: Առաջին բաժինը ղեկավարելու համար հրավիրվում է պատմաբան Լեոն, ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում Տիգրան Բեկզադյանը, տնտեսականի վարիչ՝ Քրիստափոր Վերմիշյանը, քրեականի՝ Տիգրան Հովհաննիսյանը: Կարճ ժամանակից ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում 1914 թ. աշնանից Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում լայն գործունեություն ծավալած զորավար, գեներալ-մայոր, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը, իսկ Քրիստ. Վերմիշյանին փոխարինում է Աշոտ Աթանասյանը: Քննիչ հանձնաժողովն իր գործունեությունը բնականոն կազմակերպելու համար ընդունում է կանոնադրություն և հաստատում աշխատանքային հատուկ հրահանգ:

Ստեղծման պահից Քննիչ հանձնաժողովը լայն գործունեություն է ծավալում. դիմում է զանազան կազմակերպությունների, անհատ անձանց, հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու խնդրանքով շրջաններ է ուղարկում իր ներկայացուցիչներին՝ նյութեր հավաքելու, միաժամանակ թալանված և անօթևան հազարավոր հայերից դիմումներ է ստանում:

Հանձնաժողովի նյութական սուղ վիճակը, սակայն, ուղղակի և անուղղակի խաթարում է նրա բնականոն գործունեությունը: 1919 թ. մարտ-ապրիլ ամիսներին իրար հետևից գումարվում են նիստեր՝ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի, գործադիր մարմնի, Քննիչ հանձնաժողովի անդամների, հայ վաճառականության ներկայացուցիչների, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի մասնակցությամբ, որտեղ ներկայացվում ու գնահատվում է կատարվող աշխատանքը, առաջարկություններ են արվում դրանց հետագա շարունակման համար, ֆինանսական հարցերը կարգավորելու ուղիներ են որոնվում: Ապրիլի 14-ի նիստում արդեն Թումանյանը մասնավորապես նշում է, որ ՀՀ կառավարությունն իր խոստումը ֆինանսական առումով չի կատարել, «բյուրոյի սկսած չափազանց կարևոր գործը մնում է կիսատ, որի պատասխանատվությունը ընկնում է անպայման Հայոց կառավարության վերա»: Նիստում որոշվում է բյուրոյի գործունեությունը «կանգնեցնել»: Ճիշտ է, Քննիչ հանձնաժողովը ժամանակավորապես» դադարեցնում է իր գոր-

ծունեությունը, սակայն որոշ գործառույթներ շարունակում է կատարել մինչև 1919 թ. վերջը[2]:

Հովի. Թումանյանը քաջ գիտակցել է իր և իր համախոհների կատարած աշխատանքի ողջ կարևորությունը: Վերոգրյալ գործերում հայ մեծ բանաստեղծի մերձավորագույն օգնական ու գործընկեր Հ. Համբարձումյանն այդ առումով մեջբերել է. «– Համազասպ,– ասում էր հաճախ Թումանյանը,– մենք երկուսս կարծես պետություն ենք պետության մեջ: Մեր ժողովուրդների հասարակական ու կուլտուրական կյանքին վերաբերող որևէ հարց կա՞ արդյոք, որը մեր իրավասության մեջ չմտնի: Ճիշտ եմ ասում, չկարծես, թե կատակ է: Իսկ ի՞նչ բան է պետությունը, եթե ոչ հենց այնպիսի մի ֆունկցիա, որ մշտապես կատարում ենք մենք երկուսս»[3]: Իրոք, մտավորականին բնութագրող պետական մտածողություն՝ ազգին բոլորանվեր ծառայելու ազնիվ մղումով:

## ИЗ ПАТРИОТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОВАНЕСА ТУМАНЯНА

МАРДЯН Г. А.

**Резюме**

Начало XX века было одним из трагических периодов в исторической судьбе армянского народа. Великий армянский поэт Ов. Туманян оказался в водовороте этих событий. Ярким свидетельством тому является его активная деятельность в основанных им в 1918 г. в Тифлисе Союзе армянских земляческих союзов и “Бюро по установлению потерь армян от Всемирной войны”.

---

[2] *Քննիչ հանձնաժողովի գործունեության մասին մանրամասն տե՛ս* **Զաքարյան Ան.**, *Նորահայտ փաստաթղթեր Հովի. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» գործունեության մասին (ՊԲՀ, 2002, N 2, էջ 271–304): «Հայ ժողովրդի կորուստները առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթ. հեղինակ՝ Զաքարյան Ան., Ե., 2005:*

[3] *Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969, էջ 700:*